

լիս Արթիկի Ա. խմբի եւ Լճաշէնի համալիրները համաժամանակեցնել նաեւ ըստ խեցեղէնի ձեւերի: Զուգահեռների նոյն դաշտն ունենք մետաղից եւ քարից պատրաստուած գտածոների համեմատական վերլուծութեան դէպքում: Ըստ էութեան սրանք մարտակառքերի ու դիսասյերի պիտոյքների, մանրաքանդակի, սկաւառակաձեւ ցանցկէն եւ ճաղաւոր լիւմեններով սանձերի, եռաժանիների, այրկովկասեան տիպի սակրերի, շրջանակաւոր եւ ցանցկէն դաստակով դաշտյանների, գուրգերի, զրահաշապիկների, կաշնէ կապարճների ու գոտիների բրոնզէ պիտոյքների, բրոնզից եւ թանկարժէք մետաղից պատրաստուած զարդերի, վանակատէ նետասլաքների, սարդիոնէ վեցանիստ խոշոր ուլունքների ինքնատիպ մի տեսականի են ձեւաւորում, որը բնորոշում է ուշ բրոնզի վաղ փուլի տիպաբանական կազմը (Լճաշէնի թիւ 1, 2, 10, 20, 97 դամբարանաբուրները, Արթիկի թիւ 3, 79, 109, 124, 433, Լոսի բերդի թիւ 2, 4, 7, 9, Քարաշամբի 117, Շիրակաւանի Ա. դամբարանադաշտի թիւ 15, 17, 18, 44, 48, 51, 77 դամբարանները եւ այլն)³²: Արտաշաւանի վերը ներկայացուած բրոնզէ արտեֆակտների հիմնական զուգահեռները թուարկուած համալիրներում են: Խեցեղէնի եւ մետաղական գտածոների նոյնաձեւ օրինակներով, վերջիններիս հետ համաժամանակեցւում են նաեւ Վրաստանի տարածքում պեղուած Զեմո-Բողբէի թիւ 1, 2, 4-7, Թրեյի թիւ 37, Ուղաբնոյի թիւ 8, Բերիքի դերի թիւ 4 եւ այլ դամբարանները³³:

Սրա հետ մէկտեղ Արտաշաւանի դամբարաններում առկայ են նաեւ միջին բրոնզի համալիրների համար տիպական խեցանոթների նմուշներ: Մասնաւորապէս թիւ 3 դամբարանից յայտնաբերուած կէ-

տազարդ շեւրոններով զարդարուած անօթը (աղ. Դ., նկ. 1) տիպաբանօրէն յարելով Լճաշէնի ուշ բրոնզէ դարեան խեցանոթներին, ունի որոշ առանձնայատկութիւններ: Անօթն իր ձեւով եւ ուսը զարդարող բազմաշար կէտազարդով առնչւում է միջին բրոնզէ դարեան խեցեղենի տեսականուն՝ Սեւան, Դիլիջան, Ն. Գետաշէն, Մաստարա եւ այլն³⁴:

Հարկ է նշել, որ Լճաշէնի դամբարանադաշտում նոյնպէս, բոլոր այն դէպքերում, երբ ունենք երկու շրջափուլերին բնորոշ իրերի համատեղութեան պարագան, ապա կէտազարդ շեւրոնների հետ համակցուած հանդէս է գալիս նաեւ բազմաշար կէտազարդ զարդագոտին. Լճաշէնի թիւ 5, 100, 200 եւ այլն³⁵:

Պատահողով արուած կէտազարդ զիգզագով է հարդարուած նաեւ նոյն դամբարանից գտնուած խեցու բեկորը (աղ. Դ., նկ. 2): Այս զարդաձեւը նոյնպէս բնորոշ է միջին բրոնզի տիպաբանական կազմին, հանդիպում է կարմիրբերդեան եւ սեւան-արցախեան մշակոյթին վերագրուած գրեթէ բոլոր համալիրներում, որոնցում առկայ են սեւ փայլեցրած մակերեսով կաւանոթները (Սեւան, Մեծամոր, Լճաշէն, Հառիճ եւ այլուր):

Յատկանշական է, որ Արտաշաւանի թիւ 3 եւ 4 դամբարաններից գտնուած կաշուէ կապարճի բրոնզէ եզրագոտիների (աղ. Զ., նկ. 1, 2; աղ. Թ., նկ. 5-6) անմիջական զուգահեռները ուշ բրոնզին վերագրուող համալիրներից բացի, յայտնի են նաեւ Վերին Նաւերի միջին բրոնզէ դարեան թիւ 31 դամբարանից³⁶: Կաշուէ գօտու, կապարճի կամրջաձեւ պիտոյքները եւս (օղափոկի եւ կախիչների դեր են կատարել) հանդիպում են Սիսիանի տարածքում պեղուած միջին բրոնզէ դարեան դամբարաններում³⁷:

Կաշուէ գօտու ճարմանդի եւ կամրջաձեւ կախիչների զուգահեռները տեսանելի են Քարաշամբի թիւ 117 դամբարանում, որի խեցանոթները թրծումից յետոյ զարդարուել են օխրայագոյն եւ սպիտակ մածուկով³⁸: Արտաշաւանի թիւ 4 դամբարանից գտնուած, երկշար կէտազարդ ալիքանախշով անոթի զուգահեռները նոյնպէս փաստագրուած են միջին բրոնզի դամբարաններում: Այս զարդաձեւը՝ պտտադրոշմով կամ «քայլող դրոշմիչով» կէտազարդ զիգզագը (ալիքանախշը) կարմիրբերդեան եւ սեւան-արցախեան տիպի համալիրների խեցեղէնը բնութագրող հիմնական յատկանիշներից մէկն է: Բոլոր այն դէպքերում, երբ այն հանդիպում է ուշ բրոնզին վերագրուող համալիրներում, արձանագրուած է երկու շրջափուլերին բնորոշ տիպաբանական կազմի համատեղութեան պարագան³⁹:

Ուշագրաւ գտածո է թիւ 4 դամբարանի բրոնզէ դրոշմակնիքը (աղ. Թ., նկ. 17): Այս կաշուէ տարածքում այն դեռեւս եզակի է եւ զուգահեռները տեսանելի են Սոլիի, Մարիկի Ք. ա. Բ. հազարամեակի կէսերով թուագրուող, նոյնպէս եզակի օրինակներում⁴⁰:

Ամփոփելով ներկայացուած դամբարանների գոյքի համեմատական քննութիւնը, կարելի է նշել, որ վերջիններս նշանաւորելով ուշ բրոնզի վաղ փուլերը, նաւորելով ուշ բրոնզի վաղ փուլերը, բնութագրուած են անցումային յատկանիշներով (գոյքի տեսականիում առկայ են միջին բրոնզին բնորոշ արտեֆակտներ եւ յատկանիշներ): Այս առանձնայատկութիւններով սրանք համաժամանակեցւում են Լճաշէնի թիւ 5, 200, Քարաշամբի թիւ 10, 20, 46, 60, 77, 174, Մեծամորի թիւ 2, Բեթիի թիւ 19 եւ 20, Գեղարոտի թիւ 1 եւ «աւերուած», Թալիի թիւ 8 եւ 9 դամբարանների հետ⁴¹:

Հատկանշական է, որ գոյքի այս նոյն տիպաբանական կողմով միտանիական ոճի կնիքներ պարունակող դամբարաններում միջին բրոնզին բնորոշ արտեֆակտներ չեն փաստագրուած: Այս պարագաները չեն փաստագրուած: Այս պարագաները է տալիս «անցումային յատկանիշներով» դամբարանների համար *Terminus ante quem* համարել Ք. ա. 1450 թուականը:

Այդ դիտարկման համար լրացուցիչ ապացոյց է նաեւ Ապարանի եւ Մաղկաւանջի դամբարաններում փաստագրուած շերտագրական պատկերը (կնիքով դամբարանների հետ գոյքի կազմով նոյնաբանացող դամբարանները կառուցուած են «անցումային յատկանիշներով» համալիրների վրա): Ելնելով այս դիտարկումներից Արտաշաւանի վերը բերուած դամբարանները ժամանակագրուած ենք Ք. ա. ԺԵ. դ. Ա. կէսի վերջերով:

Մշակութա-ժամանակագրական յաջորդ փուլը, որ ներկայացուած է Արտաշաւանի դամբարանադաշտում, վերաբերում է Հայաստանի տարածքի «երկաթի լայն իւրացման» դարաշրջանին: Յիշեալ փուլին բնորոշ նիւթեր են արձանագրուել վերը յիշատակուած թիւ 3 եւ 4 դամբարանների վերին թաղումներում եւ թիւ 6 դամբարանում:

Ինչպէս արդեն նշել ենք, թիւ 3 դամբարանի վերին շերտը խաթարուած էր (այն կողպտուել էր միջնադարում եւ այն ամասմբ աւերուել մեր օրերում, հողամասամբ հետեւանքով): Թաղման հարթեցման հետեւանքով: Թաղման նախնական վիճակը վերականգնելու հնարաւորութիւնը կորցրած այս շերտում արձանագրուել են մարդու վատ պահպանուած գանգ, երկու տարբեր ծնօտների բեկորներ, ցլի ամբողջական գանգ, ոչխարի ծնօտ, ձիու ներքին ծնօտ եւ ատամների, շան թերի պահպանուած գանգներ, շան թերի պահպանուած գանգ:

Դամբարանասրահի հարակալին հատուածում կոյտի վերածուած ոսկորների հետ յայտնաբերուեցին բրոնզէ զարդավահանակ, (աղ. Զ., նկ. 3) երկաթէ նետասլաք (աղ. Զ., նկ. 11), մածուկից պատրաստուած գլանաձեւ ուլունքներ (աղ. Զ., նկ. 25): Դամբարանասրահի միւս հատուածներից գտնուեցին չորս երկաթեայ դանակների մնացորդներ (աղ. Զ., նկ. 5-8), գնդիկաւոր արծաթեայ երեք ականջօղ (աղ. Զ., նկ. 21-23), արծաթեայ եռագալար ծամկալ (աղ. Զ., նկ. 19), երկու խոշոր սարդիոնէ ուլունք (աղ. Զ., նկ. 24), «սեւանեան տիպի» դաշնի գօտեկապի բեկոր (աղ. Զ., նկ. 12), երկաթեայ սղոցի բեկոր (աղ. Զ., նկ. 15), չորս տարբեր չափերի բրոնզէ ականջօղեր (աղ. Զ., նկ. 16-18, 20), բրոնզէ նետասլաքներ եւ զրահակոճակ (աղ. Զ., նկ. 4, 9, 10): Այս հատուածում դամբարանասրահի հիւսիս-արեւելեան անկիւնում առկայ էր ցլի եւս մէկ գանգ: Դամբարանասրահի վերին, խառնուած շերտից գտնուած խեցու բեկորներից վերականգնուեցին 7 խեցանօթներ: Գորշ եւ սեւ մակերեսով, անհաւասարաչափ թրծուած խեցեղէնը ներկայացուած է լայնայտակ, նեղ-գլանաձեւ վզով սափորներով, (աղ. Ե., նկ. 5-7), միականթ գաւաթներով (աղ. Ե., նկ. 1, 4), երկկանթ, կափարիչը պահպանուած կճուճով (աղ. Ե., նկ. 2) եւ երկկանթ ամֆորատիպ անոթով (աղ. Ե., նկ. 3): Հարկ է նշել, որ դամբարանում արձանագրուած վերին եւ ստորին թաղումները միանշանակ տարանջատուում են մէկ մէկուց, քանի որ, վերին թաղումը կատարելուց առաջ նախորդը ծածկուել է կաւահողի բաւականին հաստ շերտով: Վերը ներկայացուած խաթարուած թաղումը ներկայացնող գոյքը շերտագորէն նստած է կաւաշերտի վրա:

Շերտագրական այս նոյն պատկերն ունենք նաեւ թիւ 4 դամբարանում, վերին եւ ստորին թաղումները տարանջատուում են դեղնաւուն կաւահողի միջնաշերտով: Վերին թաղումն ամփոփող շերտում մարդկանց եւ կենդանիների ոսկորները, ջարդոտուած խեցանօթների բեկորները (վերականգնուել է երկու իր՝ ձագար եւ թաս, աղ. Ը., նկ. 1,3) անկանոն սփռուած էին դամբարանասրահի ողջ մակերեսով, տարբեր մակարդակների վրա: Թաղման կառոյցի հիւսիսային պատի տակ առկայ էր ցլի ներքին ծնօտի մի մասը եւ լայնաբերան թասերի բեկորներ: Այս նոյն հորիզոնում գտնուեցին սայրը ծալուած, խողովակակոթառ երկաթեայ տեգ (աղ. Թ., նկ. 2), երկաթեայ բիզ (աղ. Թ., նկ. 14), դանակի բեկոր (աղ. Թ., նկ. 7), բրոնզէ ականջօղ (աղ. Թ., նկ. 19), կապոյտ ապակուց ուլունք (աղ. Թ., նկ. 21): Հարակալին հատուածում բացուած ոսկորների կոյտի մէջ առանձնանում են ցլի գանգը եւ վերջոյթները, ոչխարի կմախքի ոսկորները եւ մարդու կմախքի ոսկորների մնացորդները (երեք կին՝ 30-35, 40-45 եւ անորոշ տարիքի, երկու տղամարդ՝ 40-50 տարեկան եւ տղամարդու վառուած ծնօտի մաս): Այստեղից գտնուած խեցու բեկորներից վերականգնուեց երկու կաւանօթ՝ գորշ-մոխրագոյն մակերեսով, լայնաբերան կճուճ եւ միականթ գաւաթ (աղ. Ը., նկ. 2, 4): Դամբարանում առկայ էին նաեւ ծարիրից կորիզաձեւ, բրոնզից գլանաձեւ, սարդիոնից եւ ամետիստից գնդաձեւ ուլունքներ (աղ. Թ., նկ. 27-30), ջնարակապատ, բրոնզէ ունկով, կաթիլաձեւ կախիկը (աղ. Թ., նկ. 31):

Արտաշաւանում պեղուած վերջին թիւ 6 դամբարանը գտնուում է Ա. դարաւանդի հարակալին եզրին: Դամբարանի շրջակայքն աւերուած էր: Անկանոն

լցուած քարակոյտից բացի (բարձրութիւնը 0. 4 - 0. 5 մ), արտաքին կառոյցների հետքերը չէին պահպանուել: Քարալիցքի կենտրոնական հատուածում բացուած թաղման կառոյցը գետնափոր, յատակազոնում ուղղանկիւն, կաւածեփ յատակով, քարաշար դամբարանասրահ է, որն հիւսիսից ունի քարաշար մուտք-դրոմոս (խցի չափերն են 1. 9X1. 4X1. 6մ, մուտքի չափերը՝ 1. 0X1. 4X1. 6մ): Դամբարանասրահը ծածկուած էր չորս հարթ, իսկ մուտքը երկու սալաքարերով: Պեղումների ընթացքում պարզ դարձաւ, որ այս դամբարանը նոյնպէս հնում կողովատուել է (խցի հարակալին պատի երկու շարը քանդուած էր): Սողանքում գտնուեցին երկաթեայ երկու նետասլաքներ եւ բրոնզէ օղ: Եւս երեք երկաթեայ նետասլաքներ, բրոնզէ օղ եւ խեցու բեկորներ գտնուեցին ծածկասալերի միջակայքում: Մուտքի հիւսիսային եզրից 1. 5մ հիւսիս-արեւելք բացուեց բազալտէ սալիկներից կառուցուած ուղղանկիւնաձեւ օջախ (չափերը 0. 4 x 0. 2մ), լցուած փայտածխի, վառուած ոսկորների մնացորդներով եւ մոխրով (աղ. Ժ):

Կմախքի ոսկորները եւ ուղեկցող գոյքը ջարդոտուած, խառնիխուռն վիճակում սփռուած էին խցով մէկ: Դատելով պահպանուած գանգերի ոսկորներից, դամբարանում թաղուել են մէկ տղամարդ, չորս կին եւ մէկ դեռահաս: Գտնուեց նաեւ ձիու երկու կմախք: Թաղումն ուղեկցող գոյքը ներկայացուած է գէնքի, պերճանքի առարկաների կաւանօթների հարուստ տեսականիով:

Երկաթեայ կեռ միասայր շեղքով դանակ-դաշոյն (աղ. ԺԳ., նկ. 1), երեք դանակների բեկորներ (աղ. ԺԳ., նկ. 2, 3, 14), հարթ, տերեւաձեւ (աղ. ԺԳ., նկ. 4-6) եւ նշաձեւ (աղ. ԺԳ., նկ. 7-8), ձողա-

ձեւ պոչուկի հիմքը խնձորակով նետասլաքներ, երկմաս, հարթ, աղեղով, ուղիղ թեւիկներով ֆիրուլա (աղ. ԺԳ., նկ. 13), տարբեր չափերի, հատոյթում քառակող իրանով երեք բզբր (աղ. ԺԳ., նկ. 9-11), կիսախողովակաձեւ երկաթեայ պիտոյքներ, որոնք ըստ ամենայնի երեսապատել են փայտեայ ձողը (կիսախողովակների վրայ պահպանուել են գալարափաթ կաշեփոկի հետքերը) (աղ. ԺԳ., նկ. 12):

Բրոնզից ձուլածոյ, վեց ապարանջաններ, որոնցից չորսն ունեն հարթ (աղ. ԺԳ., նկ. 5, 6, 8, 11), երկուսն ատամնաւոր մակերես (աղ. ԺԳ., նկ. 9, 12), բրոնզէ բարակ լարից պատրաստուած, ծայրէ բարակ լարից բերուած (աղ. ԺԳ., նկ. 1-2), ծայրերն իրար մօտեցող (աղ. ԺԳ., նկ. 4) եւ օձագլուխ (աղ. ԺԳ., նկ. 3) ապարանջաններ, մէկ ծայրը ետ ծալուած վզնոց (աղ. ԺԳ., նկ. 15), բարակ լարից, սրուող ծայրերով հինգ ականջօղ (աղ. ԺԳ., նկ. 17, 21, 22, 25, 26), մէկ ծայրը հետ ծալուած եւ իրանին փաթաթուած ականջօղեր (աղ. ԺԳ., նկ. 16, 20), սարդիոնաձեւ ուլունքով յաւելագարդուած, թերի նէ ուլունքով պահպանուած ականջօղ (աղ. ԺԳ., նկ. 24), կապարից, երեք գինդաւոր ականջօղեր (աղ. ԺԳ., նկ. 18, 19, 23), միաձոյն օղեր (աղ. ԺԳ., նկ. 27), բրոնզէ թիթեղից ճակատակալի բեկոր (աղ. ԺԳ., նկ. 35), պարուրակաձեւ փաթաթուած, բրոնզէ տափակ լարից հերագարդ (աղ. ԺԳ., նկ. 10), բրոնզէ հերկալ թիթեղից պատրաստուած ուղղանկիւնաձեւ կապողակներ (աղ. ԺԳ., նկ. 28), ծալքաւոր մակերեսով, զանգաձեւ պիտոյքներ, որոնք թերեւս ձիու հանդերձանքի մաս են կազմել (աղ. ԺԳ., նկ. 31-32), բրոնզէ զանգակ (լեզուակը չի պահպանուել, (աղ. ԺԳ., նկ. 30), կոնաձեւ զրահակոճակներ (աղ. ԺԳ., նկ. 29),

ծուռած ծայրերով բրոնզէ ձող (աղ. ԺԴ., նկ. 13):

Պերճանքի առարկաների մէջ առանձնանում է ոսկու նրբաթիթեղից պատրաստուած, դիմաՀայեաց նստած զոյգ առիւծների պատկերով զարդը (աղ. ԺԴ., նկ. 33): Գտնուել են նաեւ մեծ քանակութեամբ սպիտակ եւ կապոյտ շաղախից, սարգիոնից, ագաթից պատրաստուած բազմատեսակ ուլունքներ (աղ. ԺԴ., նկ. 34, 36, 40), խնամքով յղկուած, քարից գլանաձեւ կախիկ (աղ. ԺԴ., նկ. 14) եւ ոսկրից՝ զարդարուն մակերեսով կապիչ-ճարմանդ (աղ. ԺԴ., նկ. 7): Առկայ են նաեւ ոսկրից՝ զարդարուն մակերեսով գլանաձեւ զարդատուփի մաս (աղ. ԺԴ., նկ. 37), ոսկրից կախիկ (աղ. ԺԴ., նկ. 38), եւ կաորի խիռնչից ուլունքներ (աղ. ԺԴ., նկ. 39):

Գտածոների մէջ մեծ թիւ են կազմում կաւանօթները, որոնք ներկայացուած են խոՀանոցային եւ սեղանի սպասքի ընդգրկուն տեսականիով: Գորշ եւ սեւ մակերեսով, գնդաձեւ իրանով կճուճներ (աղ. ԺԲ., նկ. 8, 14), ուռուցիկ իրանով, ամֆորատիպ երկկանթ անօթ (աղ. ԺԲ., նկ. 19), ձագարաձեւ նեղ վզով սափորներ (աղ. ԺԲ., նկ. 9, 18), մոխրադոյն, գլանաձեւ վզով, ուսին կեղծ կանթով սափոր (աղ. ԺԲ., նկ. 5), ամֆորատիպ, երկկանթ սափոր (աղ. ԺԱ., նկ. 5), գնդաձեւ իրանով, ընդգծուած վզով սափոր (աղ. ԺԱ., նկ. 2): Գտնուել են նաեւ սափորների եւ կճուճների առանձին բեկորներ, որոնց մէջ առանձնանում են անկիւնաձեւ փորուածքներով զարդարուած եւ ծալքաւոր բռնակների բեկորները (աղ. ԺԲ., նկ. 10-13, 15-17): Ինքնատիպ ձեւերով են ներկայացուած ափսէները եւ քրեղանները (աղ. ԺԱ., նկ. 3, 4, աղ. ԺԲ., նկ. 2, 3), որոնց մէջ առանձնանում են գորշ մակե-

րեսով, կորացող պատերով, պսակը թեք շուրթով ընդգծած թասը (աղ. ԺԲ., նկ. 1), սեւ փայլանախշ գծերով զարդարուած, օղակաձեւ նստուկով եւ ելուստ-անթով քրեղանը (աղ. ԺԱ., նկ. 6):

Վերջին տարիներին մասնագիտական գրականութեան մէջ յատուկ քննարկման առարկայ են դարձել Հայկական լեռնաշխարհի Ք. ա. թ.-Ձ. դդ. պատմա-մշակութային իրողութիւնների արժեւորման հնագիտական ասպեկտները⁴²: Բանն այն է, որ Վանի թագաւորութեան վարչական, տնտեսական եւ մշակութային խոշոր կենտրոնների պեղումների արդիւնքներով վեր հանուած հնագիտական համալիրները ժամանակին արժեւորեցին «ուրարտական մշակոյթ» հասկացութեան սահմաններում⁴³: Նորայայտ նիւթերի կուտակմանը զուգընթաց, ակնյայտ էր դառնում, որ այս հասկացութեան սահմաններից դործնականում դուրս են մնացել Հայկական լեռնաշխարհի տարբեր հատուածներում փաստագրուող համաժամանակեայ հնագիտական այն իրողութիւնները, որոնց բնութագրական, տիպաբանական կազմը միանշանակ տարբերում էր ուրարտական կենտրոններում յայտնաբերուած նիւթերից: Այս հակասութիւնը յաղթահարելու նպատակով շրջանառութեան մէջ դրուեցին (մասնաւորապէս, ներկայիս Հայաստանի հնագիտական համալիրների արժեւորման համար) «տեղական մշակոյթ», տեղաբնիկների «երկաթի լայն տարածման փուլի» մշակոյթ հասկացութիւնները⁴⁴: Այս մօտեցումը կարծես թէ ընդունելի մի լուծում էր, որն ինքնըստինքեան համահունչ էր Վանի թագաւորների նուաճողական արշաւանքների զուգընթաց, «ուրարտական մշակոյթի» նոր տարածքներում արմատաւորուելու գործընթացներին: Սակայն վեր-

ջին տարիներին ի յայտ եկան մեծ թուով յուշարձաններ, որոնք ըստ էութեան «ուրարտական» եւ «տեղական» մշակոյթների փոխներթափանցման (խաչասերման) արդիւնք են եւ հնարաւոր չէ դրանք միանշանակ վերագրել յիշեալ մշակոյթներից որեւէ մէկին: Այս հանգամանքը նկատի ունենալով, կարծում ենք, որ առաւել նպատակայարմար է Վանի արքաների նուաճողական քաղաքականութեան արդիւնքում, լեռնաշխարհի տարբեր շրջաններում փաստագրուող նոր իրողութիւնների համար օգտագործել Ա. Փիլիպոսեանի առաջադրած «Վանտոսպեան մշակոյթ» որակաւորումը, իսկ «ուրարտական մշակոյթ» հասկացութեան շրջանակներում արժեւորել «խաչասերման» գործընթացներն ազդարարող հնագիտական յուշարձանները⁴⁵: Հայկական լեռնաշխարհի Ք. ա. թ.-Ձ. դդ. հնամշակութային համապատկերը ներկայացնող իրողութիւնների ստորաբաժանման այս չափանիշ-որակումների էւրիստիկական նշանակութիւնն առաւել քան ակնյայտ է: Բանն այն է, որ Էրեբունիի, Արգիշթեխի-նիլիի, Թէյշեբախիի, Բաստամի, Կայալի դերէի եւ այլն պեղումները ցոյց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի տարածքում «վանտոսպեան» մշակոյթը նշանաւորող գոյքի տիպաբանական կազմն իր որակական եւ ձեւաբանական յատկանիշներով ժամանակի մէջ որեւէ էական փոփոխութիւն չի կրում: Սրան հակառակ, մինչուրարտական յուշարձաններից յայտնի գոյքի տեսականիում յիշեալ ժամանակահատուածի համար լուրջ փոփոխութիւններ են արձանագրուում (յատկապէս թիւններ եւ արձանագրուում (յատկապէս խեցեղէնի ձեւերում): Ըստ որում, եթէ վաղ փուլերում տեսանելի են «վանտոսպեան» եւ «տեղական» մշակոյթներին բնորոշ իրողութիւնների մեկուսացուած

կամ սոսկ համատեղութեան դրսեւորումները, ապա աւելի ուշ փուլերին բնորոշ են թուարկուած եւ խաչասերման հետեւանքով ձեւաւորուած նոր իրողութիւնների համատեղութեան պարագան: Նման դիտարկումները դեռեւս լուրջ հիմնաւորման եւ փաստարկման կարիքն ունեն: Այս առումով բացառիկ նշանակութիւն են ձեռք բերում տիպաբանական տարբեր կազմերի համատեղութիւն փաստող դամբարանները, որոնց թուին են դասուում նաեւ Արտաշաւանի վերը ներկայացուած համալիրները: Այսպէս, թիւ 3 եւ 6 դամբարաններից գտնուած խեցանօթների մի խումբը ներկայացուած է այնպիսի նմուշներով, որոնք խիստ բնորոշ են Հայաստանի մինչուրարտական յուշարձաններին: Ի մասնաւորի, շեփորաձեւ պսակով, հասկազարդով եւ գծազարդերով հարդարուած, երբեմն ուսերին ունկ ունեցող սափորները (աղ. ԺԲ., նկ. 5, 9, 18, աղ. Ե., նկ. 5-7) երկկանթ ամֆորատիպ անօթները (աղ. Ե., նկ. 3, աղ. ԺԲ., նկ. 19), փայլազօծերով եւ փորագրի ալիքազարդեփայլազօծերով եւ փորագրի ալիքազարդեփայլազօծերով անոթները (աղ. ԺԲ., ըով հարդարուած անոթները (աղ. ԺԲ., նկ. 8, 14), շուրթից սկսուող բռնակով միականթ գաւաթները (աղ. ԺԲ., նկ. 4; աղ. ԺԱ., նկ. 1), երկկանթ, կափարիչով կճուճը (աղ. Ե., նկ. 2) բազմաթիւ աղբրներ ունեն Դուլինի, Մեծամօրի «հրդեհուած» շերտերի նիւթերում եւ վաղ երկաթի շրջափուլին վերագրուող դամբարաններում. Կարմիր բլուր դամբարան թիւ 3, Արթիկ, Սպանդարեան, Կարմիր բերդ, Թալին եւ այլն⁴⁶: Դուլինից, Շամիրից յայտնաբերուած «վանտոսպեան» դամբարանները կործանող բանակի մաշեալ քաղաքները կործանող բանակի մասին, ինչն հնարաւորութիւն է տալիս «հրդեհուած» շերտերի նիւթերը ժամանակագրել Ք. ա. թ. դարի վերջ-Ը. դարի

6 եւ 4 դամբարանների վերին թաղումները համաժամանակեցնել, թուագրելով դրանք Ք. ա. Ը. դ. Ա. քառորդից յետոյ: Ըստ որում N 6 դամբարանի խեցեղենն իր ձեւաբանական յատկանիշներով նոյնականանում է Հայաստանի մինչուլուրատական յուշարձանների խեցեղենի տիպաբանական կազմի հետ: Մեծամորի թիւ 6 դամբարանի նիւթերի (վերին թաղում) կրկնօրինակները տեսանելի են Կարմիր բլուրի թիւ 5 եւ 3 դամբարաններում⁷²: Այս հանգամանքը յատուկ շեշտում ենք, նկատի ունենալով, որ Կարմիր բլուրի միջնաբերդի հիմնադրումը ժամանակագրւում է Ք. ա. Է. դ. Բ. քառորդով եւ միջնաբերդից յայտնի «տեղական» խեցեղէնը ակնայայտօրէն տարբերւում է վերը ներկայացուածից: Այս փոփոխութիւնների առաջին դրսեւորումները կարելի է մատնանշել Օշականի թիւ 47 դամբարանում, որը համաժամակեցւում է Մեծամորի թիւ 4 եւ Կարմիր բլուրի յիշատակուած համալիրների հետ⁷³: Օշականի թիւ 47 դամբարանի գորշ մակերեսով, լայնափող սափորի փայլազօծերով զարդած են արդէն տեսնում ենք Վանաձորի, Խրտանոցի, Լօռի բերդի, Նորատուսի համալիրներում⁷⁴: Այս դամբարանների գոյքի նոյնաձեւերի առկայութիւնը Կարմիր բլուրի միջնաբերդում, ինչպէս նաեւ սկիւթական զէնքի եւ ասպազէնի նմուշներ պարունակող համալիրներում, հիմք են հանդիսացել նշուածները ժամանակագրելու Ք. ա. Է.-Չ. դ. սահմաններում: Ընդ որում, սկիւթական նետասլաքների առկայութիւնը, սովորաբար շաղկապւում է Թէյշեբախիի անկման ժամանակագրութեան հետ՝ Ք. ա. Չ. դ. Ա. երկու տասնամեակները⁷⁵: Ներկայումս, կուտակուած նիւթերը թոյլ են տալիս որոշակի շտկումներ կատարելու

նշուած ժամանակահատուածով ժամանակագրւող յուշարձանների թուագրութեան հարցերում: Այս պարագան առանձնայատուկ կարեւորութիւն ունի, քանի որ Հայաստանի տարածքի բոլոր այն յուշարձանների համար, որոնք պարունակում են «վանտոսպեան» մշակութիւն բնորոշ գոյք, Ք. ա. Չ. դ. առաջին երկու տասնամեակները համարւում են վերին ժամանակագրական սահմանի անսասան չափանիշը: Սակայն Օշականի թիւ 25 դամբարանի նիւթերը ցոյց տուեցին, որ վանտոսպեան գոյքով այդ համալիրն աւելի ուշ թուագրութիւն է պահանջում, ինչն էլ մատնանշում են պեղող հնագետները⁷⁶: Դամբարանից գտնուած սակա-սարմատական տիպի եռաթեւ պոչուկաւոր երկաթեայ նետասլաքի վաղագոյն նախատիպերը յայտնի են Իրանից եւ Միջին Ասիայի հարաւից: Մ. թ. ա. Է.-Չ. դ. թուագրւող եւ սակերի մշակութիւն վերագրուած յուշարձաններում առկայ են բացառապէս եռաթեւ պոչուկաւոր նետասլաքների բրոնզէ օրինակները⁷⁷: Երկաթեայ տարբերակներն հանդիպում են Իրանում Ք. ա. Չ. դ. կէսերից սկսած, իսկ ռուսական տափաստաններում վաղ սարմատական փուլից՝ Ք. ա. Դ. դարից յետոյ⁷⁸: Հիւսիսային Կովկասի եւ Հիւսիս-սեւծովեան սկիւթական յուշարձաններում զէնքի այս տեսակն ըստ էութեան չի փաստագրւում Ք. ա. Է.-Չ. դ. սահմաններում: Այս հանգամանքն յուշում է, որ վերջիններիս առկայութիւնը Հայաստանի յուշարձաններում, սկիւթական նետասլաքների հետ համատեղ, հնարաւոր է ժամանակագրել Ք. ա. Է.-Չ. դարերով եւ շաղկապել սկիւթական արշաւանքների հետ: Աւելին, Կարմիր բլուրի քաղաքային թաղամասում պեղուած դամբարաններից, Արին բերդի աքեմենեան շերտե-

րից գտնուած օրինակները⁷⁹ մատնանշում են, որ այս նետասլաքների ի յայտ գալն Հայաստանում պէտք է կապել մարական կամ աքեմենեան արշաւանքների հետ: Ըստ այդմ, Օշականի թիւ 25 դամբարանի համար, ամենաւաղ թուագրութեան սահմանը հնարաւոր է տեսնել Ք. ա. Չ. դ. Բ. կէսի կամ Չ.-Չ. դ. սահմաններում: Տեղական եւ վանտոսպեան գոյքի կազմի վերին ժամանակագրական սահմանի նման թուագրութեան կուտաններ ունենք նաեւ Լօռի բերդում: «Վանտոսպեան» ասպազէնով, տեղական խեցեղէնով, զարդի ու սպասքի հարուստ հաւաքածոյով ներկայացուած թիւ 62 դամբարանում գտնուել են նաւկրատիսեան կոյաբզեզածեւ կնիքներ⁸⁰: Ներկայումս, առաւել հաւանական է համարւում, որ Նաւկրատիսը կառուցուել է Է. դ. վերջ Չ. դ. սկզբներին: Քաղաքը ծաղկում է ապրել Ք. ա. Չ. դ. Բ. քառորդից յետոյ, Ամասիսի օրոք (Ք. ա. 570-525 թթ.)⁸¹: Ակնյայտ է, որ նաւկրատիսեան կնիքները Լօռի բերդում կարող էին յայտնուել Ք. ա. Չ. դ. կէսերից յետոյ կամ որպէս մշակութային եւ առեւտրական կապերի հետեւանք, կամ, որն աւելի հաւանական է, կամբիւսէսի արշաւանքներից յետոյ: Այս դիտարկումները թոյլ են տալիս «վանտոսպեան» եւ «տեղական» գոյքի կազմով համալիրների թուագրութեան վերին ժամանակագրական սահմանը տեղաշարժել մինչեւ Ք. ա. Չ. դ. վերջին քառորդ: Այդ են վկայում նաեւ Հայաստանի տարբեր դամբարանների նիւթերը, որոնցում փաստագրուել են սկիւթական նետասլաքներ (Մակարաշէն, Կուրթան, Զրառատ, Աստղաձոր, Ղաչաղան, Հարժիս եւ այլն)⁸²: Մ. թ. ա. Ը. դ. Բ. կէս-Չ. դ. վերջին քառորդն ընկած ժամանակագրական սահմաններում Լօռի բերդի թիւ 62, Օշակա-

նի թիւ 25 դամբարանների հետ կարելի է համաժամանակեցնել Նորատուսի թիւ 21 եւ 22 դամբարանները⁸³: Վերջիններիս նիւթերում առանձնանում են դէպի ներս թեքուող շուրթով թասերը, որոնց անմիջական զուգահեռը Արտաշաւանի թիւ 4 դամբարանում է (աղ. Ը. նկ. 3): Ընդ որում, այս տիպի բաց անօթները տիպական են Օշականի, այսպէս կոչուած վաղ հայկական շերտին⁸⁴: Սրա հետ մէկտեղ, թիւ 4 դամբարանի լայնաբերան կճուճի եւ միականթ դաւաթի անմիջական զուգահեռները փաստւում են Լօռի բերդի թիւ 3 դամբարանում⁸⁵: Արտաշաւանի թիւ 3 դամբարանի կեղծ կանթով սափորի անմիջական զուգահեռը Քուչակի Ա. դամբարանադաշտի թիւ 41 դամբարանում է, որի խեցեղէնի կազմում առկայ են ինչպէս Վանաձորի, Լօռի բերդի սափորներին, այնպէս էլ Բերդի ելուստ-կանթով փիւլաններին աղբսող օրինակները⁸⁶: Դամբարանի արծաթեայ զարդերի նոյնաձեւերը տեսանելի են Օշականի թիւ 25 դամբարանում⁸⁷: Քուչակի եւ Օշականի դամբարանների տեսականու համատեղութիւնը Արտաշաւանի թիւ 3 դամբարանում, թոյլ է տալիս թուագրելու այն Ք. ա. Չ. դ. Բ. կէսի սահմաններում: Նորատուսի, Կարճաղբերի, Խրտանոցի դամբարանների խեցեղէնի եւ զարդի նմուշներն առկայ են նաեւ Արտաշաւանի թիւ 6 դամբարանում: Սրա հետ մէկտեղ, դամբարանի խեցեղէնի կազմում տեսանելի են օրինակներ (աղ. ԺԲ, 5 եւ 18), որոնց անմիջական զուգահեռներում փաստագրւում են Ք. ա. Թ.-Ը. դ. Ա. քառորդի սահմաններով թուագրւող յուշարձաններում (Թալին, դամբ. N 51 եւ այլուր)⁸⁸: Առիւծազարդ ոսկեայ նրբաթիթեղի եւ Երկաթալ թիթեղի օղակապի աղբսներն Օշականի թիւ 59 դամբարանի նիւթերում

են, որի գոյքի տեսականին միանշանակ աւելի վաղ է, քան նոյն յուշարձանի թիւ 25 դամբարանը: Բացի այդ, Արտաշաւանից գտնուած թասի շուրթի ձեւը յուշում է, որ այն «վանտոսպեան» դասական օրինակների նմանակման վաղ նմուշ է (աղ. ժԲ., նկ. 1): Բանն այն է, որ «վանտոսպեան» խեցեգործութեանը բնորոշ շուրթի այս ձեւը նմանակող ուշ գուգահեռների համար տիպական են լայնացող եւ դէպի ներս թեք տեղադրուած տարբերակները: Նշուածը թոյլ է տալիս Արտաշաւանի թիւ 6 դամբարանը ժամանակագրել Օշականի թիւ 59 դամբարանից յետոյ, բայց աւելի վաղ, քան Օշականի թիւ 25-ը եւ նրան համաժամանակեայ համալիրները: Եթէ թիւ 59 դամբարանի համար չի բացառուում Բ. ա. Ը. դ. վերջ - է. դ. Ա. կէսով թուագրութեան հնարաւորութիւնը, ապա Արտաշաւանի թիւ 6 դամբարանը պէտք է ժամանակագրուի Բ. ա. է. դ. Բ. կէս-Չ. դ. սահմանագծով: Ամփոփելով, հարկ է նշել, որ ներկայումս վանի թագաւորութեան անկման, հայ-մարական, հայ-սկիւթական փոխյարաբերութիւնների հետ կապուած հիմնախնդիրները շարունակում են մնալ ուշադրութեան կենտրոնում եւ լուրջ քննարկման առարկայ են: Այսօր նորովի են արժեւորուում հետազոտութիւնների այս ոլորտին առնչուող սեպագիր, մատենագիր տուեալները, անտիկ հեղինակների հաղորդումները: Բնականաբար, Հայաստանի տարածքի նորայայտ յուշարձաններից ձեռք բերուած նիւթերն ընդլայնում են հետազոտութիւնների համար անհրաժեշտ ելակէտային տեղեկատուութեան դաշտը եւ բացառիկ նշանակութիւն ունեն հայոց անցեալի իրողութիւնները վեր հանելու առումներով⁸⁹:

ՀԱՍՏՈՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԼԶԳ Լրաբեր հասարակական գիտութիւնների ՀՀՅ Հայաստանի հնագիտական յուշարձաններ
- ՀՀԱԱԳՆ Հայաստանում հնագիտական աշխատանքների արդիւնքների անփորձ գիտական անուշրջան
- ՊԲՀ Պատմա-բանասիրական հանդէս
- АО Археологические открытия
- ВГМГ Вестник государственного музея Грузии
- ВГУ Вестник государственного университета
- ВОН Вестник общественных наук
- ИФЖ Историко-филологический журнал
- КСИА Краткие сообщения института археологии
- МИА Материалы и исследования по археологии СССР
- МИКЭАНСО Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского Нагорья и сопредельных областей
- ОККАЭ Отчет Квемо-Картлийской экспедиции (1965-1971 гг.)
- ПАИ Полевые археологические исследования
- СА Советская археология
- AJA American Journal of Archaeology
- AMI Archaeologische mitteilungen aus Iran
- AS Anatolian studies

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964; Հայ ժողովրդի պատմութիւն, Բ Ա., Երեւան, 1971:
- 2 К. Х. Кушнарева. Южный Кавказ в IX-II тыс. до н. э.: Этапы культурного и социально-экономического развития, Санкт-Петербург, 1993. стр. 51-171; Археология. Эпоха бронзы Кавказа и Средней Азии. Ранняя и средняя бронза Кавказа, М., 1994.
- 3 Գ. Արեշեան, Կ. Ղաֆադարեան, Յ. Սիմոնեան, Գ. Տիրացեան, Ա. Քալանթարեան, Հնագիտական հետազոտութիւններ Հայկական ՍՍՀ Աշտարակի եւ Նաիրիի շրջաններում, ԼՀԲ, 1977 N 4, էջ 77-93; Գ. Մ. Սարգսեան, Պեղումներ «Գազանց» հնավայրում, ՀՀԱԱԳՆ, Երեւան, 1987, էջ 19-20:
- 4 А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 47-110; К. Х. Кушнарева. К проблеме выделения археологических культур периода средней бронзы на Южном Кавказе,

- КСИА, 1983, вып. 176, стр. 9-15; К. Х. Кушнарева. Южный Кавказ..., стр. 92-171; Археология, стр. 75-92.
- 5 Б. А. Куфтин. Археологические раскопки в Триаleti, I, Тбилиси, 1941, стр. 78-105; С. А. Есян. Ереван, Ереван, 1969, стр. 27-28; Э. М. Гогодзе. Периодизация и генезис курганной культуры Триаleti, Тбилиси, 1972, (վրացերէն); К. Х. Кушнарева. Южный Кавказ..., 92-171; Археология, стр. 75-92.
- 6 Ш. Ш. Дедабришвили, Курганы Алазанской долины. Тбилиси, 1979; Г. Ф. Гобегджишвили, Бедени - культура курганных погребений, Тбилиси, 1980 (վրացերէն); К. Н. Пицхелаури, Новые аспекты хронологии археологических памятников центральной части Южного Кавказа, МИКЭАНСО, Ереван, 1990, стр. 246-247.
- 7 К. Х. Кушнарева. Южный Кавказ..., стр. 102-106; Գ. Ե. Արեշեան, Յ. Ե. Սիմոնեան, Ա. Ե. Քալանթարեան, Նորայայտ դամբարաններ Չոդագից, ՀՀԱԱԳՆ, 1987, էջ 6-8; Г. Е. Арешян. Маисянские курганы, АО 1985 года, М., 1987, стр. 558.
- 8 Э. М. Гогодзе. Периодизация и генезис..., стр. 106-111; К. Х. Кушнарева. Южный Кавказ..., стр. 132-134.
- 9 Է. Վ. Խանգաղեան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը Բ. ա. Գ. հազարամեակում, Երեւան, 1967, գլ. 21, աղ. VII, XIX, XX; Ա. Հ. Սարգսրեան, Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում, Երեւան, 1967, աղ. LII/2, LXIV, LXV/4, 7; Օ. Մ. Джапаридзе, Г. Б. Авелишвили, А. Т. Церетели, Памятники Месхети эпохи средней бронзы, Тбилиси, 1985, таб. 22, 40, 41; Э. М. Гогодзе. Периодизация и генезис..., таб. 19, рис. 4, 5, 10, таб. 20, рис. 17-18; Р. М. Мунчаев. Кавказ на заре бронзового века, М., 1975, рис. 22/8, 25/8, 10, 11, 13, рис. 31; М. Г. Гаджиев. Раннеземледельческая культура северо-восточного Кавказа, М., 1991, рис. 35.
- 10 Л. А. Петросян. Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.), Ереван, 1989, таб. 36-40; Է. Վ. Խանգաղեան, Էլար-Դարանի, Երեւան, 1979, աղ. XII/3,6; К. Х. Кушнарева. Новые данные о поселении Узерлик-тепе, МИА, N 125, М.-Л., 1965, рис. 13/5; Օ. Ս. Խնկիկեան, Պեղումներ Եղեգնաձորի շրջանում, (1986-1987 թթ.), Հնագիտական աշխատանքներ Հայաստանի անրակառուցներում, Երեւան, 1992, էջ 78-79, աղ. LXXI/28-31:
- 11 Отчет Квемо-Картлийской археологической экспедиции (1965-1971 гг.), Тбилиси, 1975, таб. 60/11, 61/8, 63/9.
- 12 М. Г. Гаджиев. Раннеземледельческая культура..., стр. 168-169; Գ. Ս. Աւետիսեան, Տ. Մ. Մոսրաթեան, Պեղումներ Թալիսի անրակառուցներում, ՀՀԱԱԳՆ, Երեւան, 1991, էջ 26-27:
- 13 Է. Վ. Խանգաղեան, Էլար-Դարանի, էջ 43-44,

- աղ. VIII/3,4; К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа, М., 1970, рис. 43/23,24; Э. М. Гогодзе. Периодизация и генезис..., таб. IX/8.
- 14 К. Х. Кушнарева. Южный Кавказ..., стр. 91-92.
- 15 К. Н. Пицхелаури. Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, стр. 100-101; Г. Е. Арешян, В. Э. Оганесян, Ф. М. Мурадян, П. С. Аветисян, Л. А. Петросян, Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры, ИФЖ, 1990, N 1, стр. 64-68, Л. А. Петросян. Раскопки памятников..., стр. 54-60.
- 16 С. А. Schaeffer, La date des kourganes de Trialeti, Antiquity 1943, vol. 68, p. 183-187; А. А. Мартиросян. Армения в эпоху..., стр. 297-299; Э. М. Гогодзе. Периодизация и генезис..., стр. 107.
- 17 А. Мартиросян. Армения в эпоху..., стр. 73-78.
- 18 А. Мартиросян. Армения в эпоху..., стр. 81-113, 299-301.
- 19 А. Мартиросян. Армения в эпоху..., стр. 96-110; Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, Ереван, 1975, стр. 189.
- 20 Г. Е. Арешян. О некоторых погребениях Артикского некрополя, - Молодой научный работник, Ереван, 1970, стр. 211-219; Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, стр. 189-190; К. Н. Пицхелаури, Восточная Грузия..., стр. 100-101.
- 21 Г. Е. Арешян и др., Конец среднего бронзового века..., стр. 58-63, К. Н. Пицхелаури, Новые аспекты..., стр. 248-250.
- 22 Г. Е. Арешян и др., Конец среднего бронзового века..., стр. 61-63; Գ. Ս. Աւետիսեան, Բ. Ս. Բարսեղեան, Ա. Գ. Հմայակեան, Ա. Ս. Փրիլիպուսեան, Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանների Հայաստանում եւ ժամանակագրութեան հարաբերակցումը, ՀՀԱԱԳՆ, Երեւան, 1996, էջ 8-10:
- 23 Ա. Ս. Փրիլիպուսեան, Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին արեւելեան կնքագործութեան հնավայրում, Երեւան, 1998, էջ 43:
- 24 А. А. Мартиросян. Армения в эпоху..., стр. 100.
- 25 D. Collon, First impressions. Cylinder Seals in the Ancinet Near East, London, 1993, p. 61-63, fig. 256, 259.
- 26 G. Edelstein, Tombs of merchant-warriors near Acco, Qadmoniot, Quarterly for the Antiquities of Eretz - Israel and Bible lands, vol. V, N 1 (17), 1972, p. 19-21.
- 27 С. А. Schaeffer, Stratigraphie comparée et chronologia de l'Asia Occidentale. London, 1948, p. 408-415.
- 28 S. Dunham, Remarcs on some objects from Umm el-Marra, 1994-1995, AJA, 1997, vol. 101, N 2, p. 232- 234, fig. 2, 3.
- 29 R. Badalian, P. H. Kohl, D. Stronach, A. Tonikian, Preliminary Report on the 1993 Excavations at Horom, Armenia, Iran, vol XXXII, 1994, p. 10-12.
- 30 Գ. Ս. Աւետիսեան, Բ. Ս. Բարսեղեան, Հոռոմի դամբարանային համալիրների պարբերացման եւ ժամանակագրման խնդիրների շուրջ, ՀՀԱԱԳՆ,

Յրեան, էջ 6-8:

31 Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. рис. 93, 94, 103; *Յ. Մնացականեան*, Լճաշէնի մշակոյթի զարգացման հիմնական էտապները, ՊՀԲ, 1965, N 2, աղ. Դ.; *Ա. Ա. Փիլիպոսեան*, Հին Արեւելքի շրջանակաւոր դաստակով դաշտերը ու արեղ, Յրեան, 1999, աղ. 41, 42:

32 *Յ. Մնացականեան*, Լճաշէնի մշակոյթի..., աղ. 1/3,4; *Ա. Ա. Փիլիպոսեան*, Հին Արեւելքի..., աղ. 24, 33, 41-45; Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, стр. 174, 188, 198-220; С. Г. Деведжян. Лори Берд, I, Ереван, 1981, таб. VII-IX; *Վ. Է. Յովհաննիսեան*, *Յ. Մ. Մորադեան*, Քարաշամբի դամբարանադաշտի N 117 դամբարանը, ԼՀԳ, 1986, N 4, գլ. 83/1,2,4,5; *Ռ. Մ. Քորոսեան*, *Օ. Ա. Խնկիկեան*, *Ա. Պետրոսեան*, Հին Օիրակաւան, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառոյցներում, Յրեան, 1992, էջ 16, աղ. XI:

33 К. Н. Пицхелаури. Восточная Грузия..., таб. VI, VII, IX; К. Н. Пицхелаури. Исследования Кахетинской археологической экспедиции, ПАИ в 1980 году. Тбилиси, 1982, таб. XXI; Р. М. Абрамишвили. Основные итоги археологической экспедиции Большого Тбилиси, Тбилиси, I, Археологические памятники, Тбилиси, 1978, таб. 31; Uterwegs zum goldenen Vlies; Archäologische Funde aus Georgien, Saarbrücken 1995, p. 109-110, 256, 261, abb 83, 95-97.

34 А. А. Мартиросян. Армения в эпоху..., стр. 21-22; С. А. Есаян, Древняя культура племен север-восточной Армении, Ереван, 1976, таб. 85.

35 Arménie. Trésors de l'Arménie ancienne Nantes, 1996, cat. 62-66; Г. Е. Арешян и др., Конец среднего бронзового века..., таб. V.

36 А. Е. Симонян, Могильник Верин Навер, АО 1986 года, М., 1988, стр. 474.

37 *Օ. Ա. Խնկիկեան*, Միջին բրոնզեդարեան դամբարանների պեղումներ Սիսիանում, ԼՀԳ, 1990, N 7, աղ. Գ.:

38 *Վ. Է. Յովհաննիսեան*, *Յ. Մ. Մորադեան*, Քարաշամբի դամբարանադաշտի N 117 դամբարանը, էջ. 94-95, աղ. I, գլ. 5, 6, 8:

39 Г. Е. Арешян и др., Конец среднего бронзового века..., таб. V/1, VI/10, VII/1,3,4, IX/1.

40 *Ա. Ա. Փիլիպոսեան*, Հայկական լեռնաշխարհի կնիքները, աղ. 6, գլ. 11, 13:

41 Г. Е. Арешян и др., Конец среднего бронзового века..., стр. 53-74.; А. А. Мартиросян. Армения в эпоху..., стр. 83-11; Л. А. Петросян. Раскопки памятников..., стр. 55, таб. 43-44; E. Kshanzadian, Metsamor 2, la necropole, Les tombes du bronze moyen et recent, Paris, 1995, pl. 17.

42 *Գ. Ա. Տիրացեան*, *Գ. Ե. Արեշեան*, Հնագիտութիւնը եւ Ուրարտու-Հայաստան պորթլեմը, ՊԲՀ, 1990, N 3, էջ 70-75; С. А. Есаян, Л. Н. Бягтов, С. Г. Амаякян, А. Г. Канецян, Биайнская гробница в Ереване, ԼՀԹ, Բ. 15, պրակ. II,

Յրեան, 1991, էջ 5-26; *Ա. Գ. Հմայակեան*, Ուրարտական պետութեան եւ մշակոյթի դրսեւորման խնդրի շուրջ, ԼՀԹ, Բ. 16, պրակ. III, Յրեան 1995, էջ 105-106; *Ա. Ա. Փիլիպոսեան*, *Լ. Ե. Խաչատրեան*, ԼՀԹ, Բ. 16, պրակ. III, Յրեան 1995, էջ 80-92; *Ռ. Ա. Մկրտչեան*, *Պ. Ա. Աւետիսեան*, Ուրարտական դամբարանների հնամարդարանական միջերը, Գ. ա. 8-6-րդ դդ. պատմա-հնագիտական կոնտեքստում, ԼՀԹ, Բ. 16, պրակ. III, Յրեան 1995, էջ 98-104:

43 Б. А. Куфтин. Урартский колумбарий у подошвы Арарата, ВГМГ, XIII, В., Тбилиси, 1943, стр. 1-73, Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959..

44 А. А. Мартиросян. Раскопки в Головино, Ереван, 1954; А. А. Мартиросян. Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX-VIII вв. до н. э.), ВОН, 1956, N 9, стр. 61-84, А. А. Мартиросян. Армения в эпоху..., стр. 193-293; С. А. Есаян и др., Биайнская гробница... стр. 26.

45 *Ա. Գ. Հմայակեան*, Ուրարտական պետութեան..., էջ 105-106:

46 А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961, рис. 26 а, б, 27а, 29а; *Ա. Ա. Յայեան*, Հնագիտական իրերի կատալոգ, II, Յրեան, 1967, աղ. XIII-XV; *Ա. Ա. Յայեան*, Հնագիտական իրերի կատալոգ, III, Յրեան, 1972, աղ. VIII-XII; *Է. Վ. Խանգաղեան*, *Կ. Հ. Մկրտչեան*, *Է. Ա. Պարսամեան*, Մեծամօր, Յրեան, 1973, աղ. XXXIX, գլ. 2; К. Х. Кушнарева. Древнейшие памятники Двина, Ереван, 1977, рис. 15, 18/3, 31, 33; Т. С. Хачатрян, Артикский некрополь, Каталог, Ереван, 1979, п-209, п-218, п-223.

47 *Է. Վ. Խանգաղեան եւ ուր.*, Մեծամօր, էջ 56-58; К. Х. Кушнарева. Древнейшие памятники Двина, стр. 105-108.

48 Պեղումները *Լ. Պետրոսեանի*, չհրատարակուած միջեր:

49 «Հաստոցանորմալ» գործարանի բակի դամբարան, չհրատարակուած միջեր:

50 *Ա. Ա. Յայեան*, Հնագիտական իրերի կատալոգ, II, աղ. XXVII, գլ. 4; С. Г. Деведжян, Лори-Берд, I, таб. XXIX/4,13; С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан, I, Ереван, 1988, таб. LXX/9, N. Yengibaryan, The Urartian tombs of Karchaghbyur, XX/5.

51 А. А. Мартиросян. Аргиштихинили, Ереван, 1974, рис. 69/1.

52 *Ա. Ա. Յայեան*, Հնագիտական իրերի կատալոգ, II, աղ. XXVI, գլ. 4:

53 С. Г. Деведжян, Лори-Берд, I, таб. XXIX/4

54 *Ա. Ա. Յայեան*, Հնագիտական իրերի կատալոգ, I, Յրեան 1964, աղ. IX/7; *Ա. Ա. Յայեան*, Հնագիտական իրերի կատալոգ, III, աղ. XXXI/8; А. А. Мартиросян. Аргиштихинили, рис. 68; Г. Г. Аветисян, Биайнская керамика из памятников Араратской долины, Ереван, 1992, таб. XXXVI-

PI/1-4; В. Ögün, Die urartäischen Bestattungsbräuche, in "Studien zur Religion und Kultur Kleinasiens". Festschrift für F. K. Dörner, Zweiter Band, Leiden, 1978, Taf. CLX/27.

55 Б. Б. Пиотровский, Кармир Блур II, Ереван, 1952, рис. 5; А. А. Мартиросян. Армения в эпоху..., таб. XXIII/7; С. А. Barney, A first season of excavations at the urartian citadel of Kayalidere, AS, vol. XVI, 1966, pl. XV/c; St. Kroll, Die Urartäische Keramik aus Bastam; in T. W. Kless Bastam I, Ausgrabungen in den Urartäischen Anlagen 1972-197, Berlin, 1979, abb 3/2; St. Kroll, Keramik Urartischer Festungen in Iran. AMI, 1976, Band 2, typ 87.

56 А. А. Мартиросян. Раскопки в Головино, таб. XI/6,7, таб. XIII/28; А. А. Мартиросян. Город Тейшебаини, рис. 41, 49, 54; С. А. Есаян, Древняя культура..., таб. 139/8; С. Г. Деведжян, Лори-Берд I, таб. XVIII/1,2; С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан, таб. XLIX/5; J. De Morgan, Mission Scientifique au Caucase, v. I, Paris, 1889, fig. 157/3.

57 Б. Б. Пиотровский, Кармир Блур, I, Ереван, 1950, рис. 17, 22, 32; Б. Б. Пиотровский, Кармир Блур, II, стр. 20; Б. Б. Пиотровский, Ванское царство, стр. 195, рис. 59; А. А. Мартиросян. Аргиштихинили, рис. 896; *Ա. Ա. Փիլիպոսեան*, Հին Արեւելքի..., աղ. 4/17-20; N. Yengibaryan, The Urartian tombs of Karchaghbyur, pl. V/3, XII/1, XV/1.

58 А. А. Мартиросян. Раскопки в Головино, таб. XIII/5, XVI/6; А. А. Мартиросян. Армения в эпоху..., таб. XXX; *Ա. Ա. Յայեան*, *Լ. Ն. Բիլազով*, *Ա. Գ. Հմայակեան*, *Ա. Գ. Կանեցեան*, Յրեանի Բիլազովյան դամբարանը (2), ԼՀԹ, Բ. 16, պրակ III, աղ. VII/6-9; J. De Morgan, Mission..., fig. 121.

59 Б. Б. Пиотровский, Кармир Блур, I, 29; А. А. Мартиросян, город Тейшебаини, рис. 33а, А. А. Мартиросян. Аргиштихинили, рис. 89а; С. А. Есаян, О. С. Хнхикян, Находки Биайнских изделений в Ехегнадзоре, ВГУ, 1990, N 3, стр. 37, таб. I/14; Ի. Ա. Կարապետեան, Նորաշէնի վաղ հայկական ամրոցը, ՊԲՀ, 1974, 2, աղ. IV/11, 15; *Ն. Գ. Ենգիբարեան*, Ուրարտական դամբարաններ Նորատուսից, ԼՀԱԱԳՆ, Յրեան, 1991, էջ. 71; N. Yengibaryan, The Urartian tombs of Karchaghbyur, pl. XVIII/14,17, լանդմաշ է հրատարակութեան:

60 А. А. Мартиросян. Раскопки в Головино, таб. XVI; А. А. Мартиросян. Армения в эпоху..., рис. 84, 106, таб. XXI; *Մ. Ա. Հարաբեան*, Հնագիտական հետազոտութիւններ Սիսիանում, պատմական հնագիտական ուսումնասիրութիւններ, Յրեան, 1985, աղ. 18 ք.; С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, таб. LIV; Л. А. Петросян, Раскопки памятников..., таб. 65/6; J. De Morgan, Mission..., fig. 104.

61 Б. Б. Пиотровский, Кармир Блур, II, рис. 6; Б. Б. Пиотровский, Кармир Блур, III, рис. 36; Էրեբունի թանգարան, գոյք 82/13,14,16,20; А. А. Мартиросян. Аргиштихинили, рис. 84.

62 Б. Б. Пиотровский, Кармир Блур, I, рис. 14; С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, таб. LIII/7-11, LX/8.

63 А. А. Мартиросян. Аргиштихинили, рис. 82/10.

64 Т. Özguç, Jewellery, gold votive plaques and silver belt from Altintepe, AS, Vol. XXXIII, 1983, p. 33-37, pl. XV/c.

65 А. А. Мартиросян. Раскопки в Головино, таб. XIII/36; *Ա. Ա. Յայեան*, Ուրարտական գոտիով դամբարան Չորոս, ՊԲՀ, 1979, N3, աղ. II/10,11; N. Yengibaryan, The Urartian tombs of Karchaghbyur, pl. I/3, IX/17, XIV/14; A. Erzen, Giymli. bronz defines Ve Giymli Kazisi, Türk Tarih Kurumu belleten, 1974, С. XXXVIII, rez. 26.

66 С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, таб. LX/3; Б. Б. Пиотровский, Кармир Блур, II, рис. 25; *Գ. Ա. Քոմսանեան*, Գոսաւազիդի դամբարանը, ԼՀԱԱԳՆ, Յրեան, 1987, էջ 29; *Օ. Ա. Խնկիկեան*, Դամբարանների պեղումներ Հարթիս գիւղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառոյցներում, Յրեան, 1992, աղ. XCVIII/7, С. А. Есаян, М. М. Погребова, Палочки-застежки в закавказских и скифских памятниках, ВОН, 1980, N 1, таб. II/2.

67 Б. Б. Пиотровский, Искусство Урарту (VIII-VI вв. до н. э.), Л., 1962, рис. 59-60; *Ա. Ա. Յայեան*, Հնագիտական իրերի կատալոգ II, աղ. XXXVI/1; С. Ходжаш, Н. Трухтанова, К. Оганесян, Эребуни, М., 1979, рис. 111; *Ն. Ենգիբարեան*, Ուրարտական դամբարաններ Նորատուսից, էջ 67; Էրեբունի թանգարան, գոյք N 26/148-150:

68 С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, рис. 4.

69 С. А. Barney, A first season of excavations at the urartian citadel of Kayalidere, AS, vol. XVI, 1966, pl. IX/c; H.-J. Kellner, Bronzene Weihe - und Votivgaben, Urartu, Ein Wiederentdeckter Rivale Assyriens., Ausstellungskataloge der Prähistorischen Staatssammlung, band 2, München, 1976, fig. 47, 48; O. A. Tasyürek, Darsellungen des Urartäischen Gottes Haldi, Studien zur Religion und Kultur Kleinasiens, 1978, p. 943, fig. 8.

70 *Է. Վ. Խանգաղեան եւ ուր.*, Մեծամօր, էջ 171-185, գլ. 162-165, աղ. XXXVIII-XXXIX:

71 *Է. Վ. Խանգաղեան եւ ուր.*, Մեծամօր, գլ. 169, աղ. XLII-XLIII:

72 А. А. Мартиросян. Город Тейшебаини, рис. 28 а,б, 29, а,б,в,г

73 С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, таб. LXX, рис. 7, 9, LXXI.

74 А. А. Мартиросян. Раскопки в Головино, таб. XIII; А. А. Мартиросян. Армения в эпоху..., таб. XXII; С. Г. Деведжян, Лори-Берд I, таб. XXVIII.

75 Б. Б. Пиотровский, Кармир Блур, I, стр. 86-97.

76 С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, стр. 69-76, таб. XLVIII-LIV.
 77 И. Н. Медведская, Некоторые вопросы хронологии бронзовых наконечников стрел Средней Азии и Казахстана, СА, 1972, N 3, стр. 81-83.
 78 Степи Европейской части СССР в скифо-сарматское время, М., 1989, стр. 165, 173.
 79 А. А. Мартиросян. Город Тешебаини, стр. 61.
 80 Ա. Հ. Դեմիրճյան, Ուրարտական յուշարձաններից յայտնի կոշարգեղաձեռն կնիքների շուրջ, Էրեբունի-Երեւան, Երեւան, 1998, էջ 3-4:
 81 В. П. Яйленко, Архаическая Греция и Ближний Восток, М., 1990, стр. 197-209.
 82 С. А. Есаян, М. Н. Погребова, Скифские памятники Закавказья, М., 1985, стр. 25-31.
 83 Պեղումները՝ Ա. Փրիլիպուսեանի եւ Ն. Ենգիբարյանի:
 84 С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, таб. XXVIII/6.
 85 С. Г. Деведжян, Лори-Берд I, таб. XXIX.

86 А. А. Мартиросян. Армения в эпоху..., таб. XXII/1, 2, 4; С. А. Есаян, Древняя культура племен..., таб. 143.
 87 С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, таб. XXVIII/6.
 88 Պեղումները Պ. Ս. Աւետիսեանի:
 89 Գերմանական հնագետների՝ Բաստամի եւ Կարմիր բլուրի կործանումը Բ. ա. է. դ. կէտերով թուագրուող դիտարկումները տես՝ W. Kless Bastam II, Ausgrabungen in den Urartäischen Anlagen 1977-78, Berlin, 1979: Նման կարծիք են յայտնել Ի. Ն. Մեդեդեանյան եւ Ս. Զաւարսկի, տես բանավեճերը Российская Археология, 1992, N 3, 1993, N 2, 1994, N 1: Սրա հետ մէկտեղ սակայ է Ա. Հմայակեանի տեսակետը, որ Թէլշեբաինին կարող էր կործանուել Բ. ա. 525 թուականից յետոյ՝ Ա. Գ. Հմայակեան, Թէլշեբաինի արշաւող բանակի երթուղին, Էրեբունի-Երեւան, էջ 10-12:

THE NEW REVEALED ARCHAEOLOGICAL SITES OF ARMENIA
 (The Artashavan Necropolis)

By Pavel Avetisyan, Nora Yengibaryan, Gagik Sargsyan


Summary

This article puts into circulation data excavated from "Gazanots" tombs. Series of characteristic so-called Threlck-Vanadzor materials exposed at tomb no. 5 go with the inventory set attributed to the Middle Bronze Age 1st phase. That permits to date the tomb from the turn of the XXII-XXI B.C. and identify it to the 1st group of the Threlck-Vanadzor complexes (Pl. I, II). It has been long recognized that only complexes characteristic to the last phase of Threlck-Vanadzor culture occur in Armenia, while the earliest manifestations to be mapped in Georgia. Tomb no. 5 from Artashavan as well as complexes excavated at the necropolises of Nor Oshakan, Lchashen, Karashamb, Sisian indicates that the whole of Armenia is settled with the earliest evidences of this culture.


Only complexes conducted with Mitannian seals have been attributed to the 1st phase of the Late Bronze. Nowadays there is a vast series of

tombs represented by artifacts characteristic to the 1st phase of the Late Bronze Age. This article grounds that the lowest border for tombs with "Mitannian" seals and synchronous artifacts is the midst XVI B.C.. As to the tombs with materials characteristic to the various phases of the Bronze Age, they stand separate both with inventory and stratigraphy, standing apart from the mentioned complexes, so that to be recognized as realities of the 1st phase of the Late Bronze (Pl. III-IV, VI-1, 2, 13, 14, VII, VIII 5-10, IX, 1, 3-6, 8-13, 15-17, 20, 21) Artashavan's upper burials nos. 3 and 4 and tomb no. 6 represent characteristic Urartian artifacts (Pl. IX-XIV). Together with this there are samples of pottery, arms and adornments well known from the sites of the VIII-V B.C.. Discussion of these data permits to assert that some tombs with Urartian materials can be dated from the late VI - early V centuries B.C..


ԱՂԻՍԱԿՆԵՐ




Աղիսակ Ա.




Աղիսակ Բ.




Աղիսակ Գ.




Աղիսակ Դ.




Աղիսակ Ե.




Աղիսակ Զ.




Աղիսակ Է.



Աղիսակ Ը.




Աղիսակ Թ.




Աղիսակ Ժ.




Աղիսակ ԺԱ.



Աղիսակ ԺԲ.



Աղիսակ ժ.Գ.



Աղիսակ ժ.Գ.

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)

Արմեն Մուշեղեան

Խորին ակնածանքով եւ երախտիքի գագաթով
 Լուսիրով եւ ուսուցչիս՝ մեծանուն
 Գեորգ Չահուկեանին

Ուրարտական դիցարանի ամբողջական կազմն ընդգրկուած է ՄՀերի դռան արձանագրութեան մէջ: Կողմնակի որոշ տուեալներ են մատուցում նաեւ ուրարտական միւս արձանագրութիւնները: Դատելով ՄՀերի դռան ներկայացրած ցանկից (70 դիցանուն, ինչպէս առկայ է այլ հին արեւելեան դիցարաններում եւս)՝ դիցանունները դասակարգուած են խիստ պատճառաբանուած յաջորդականութեամբ: Այստեղ իւրաքանչիւր դիցական միաւոր զբաղեցնում է իր կայուն, ամրագրուած տեղը:

Ուրարտական դիցարանի ուսումնասիրութեամբ զբաղուել են բազմաթիւ արեւելագէտներ եւ հայագէտներ ղեռ անցեալ դարի կէսերից: Նախորդների ուսումնասիրութիւնները, բացառութեամբ Հմայակեանի, նուիրուած են առանձին աստուածութիւնների տիպաբանական գուգահեռներին եւ անուանաբանական քննութեանը, այլեւ դիցարանի կառուցուածքային վերլուծութեանը: Այսպէս շարունակելով Գ. Ղափանցեանի մօտեցումը, Գ. Մելիքիշւիլին փորձել է վերջնականապէս տարբերակել արական եւ իգական աստուածութիւններին (Դ. Меликшвили, 1960: 370-372): Գ. Զահուկեանը փորձել է յատկապէս պարզել հայկական տարրի առկայութեան խնդիրը, թէ որքանով է այն ընդգրկուած ուրարտական դիցարանի մէջ (Զահուկեան, ՀԼՊ, էջ 444-45): Վերջին հետազօտու-

թեան հեղինակը՝ Ս. Հմայակեանը, դիցանունները դասակարգում է ըստ երեք խմբի, հաշուի առնելով նրանց գերակայութիւնը եւ գործառնութի կարեւորութիւնը, այլեւ քննում է ծէսերի եւ պաշտամունքի հետ կապուած խնդիրները: Այս տեսանկիւնից այն շատ արժէքաւոր աշխատութիւն է (Ս. Հմայակեան, Երեւան, 1990): Արդ, ինչո՞վ է արդարացուած սոյն ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը: Առաւելապէս մօտեցման տարբերութեամբ:

Այս ուսումնասիրութեան ելակէտը դիցանունների լեզուական պատկանելութեան պարզաբանումն է՝ նախ եւ առաջ անունների կազմութիւնը վերլուծելու միջոցով: Այդ նպատակով պէտք է ներառել հնարաւորին չափ շատ դիցանուններ եւ փորձենք պարզել համակարգի մէջ փոխառնութիւններն ու ներքին օրինաչափութիւնները, նախքան գուգադրական-համեմատական քննութեան անցնելը:

Միանգամայն պարզ է, որ քննուող դիցարանի կազմը գուտ ուրարտական լինել է՛ր կարող, ինչպէս որ «գուտ» է՛ն աշխարհի եւ ոչ մի դիցարան:

Այսպիսով, կարող ենք մատնանշել հետազօտութեան հետեւեալ բնութագրիչները.

- ա) անուանաբանական-բառակազմական,
- բ) աշխարհագրական տեղորոշում,